



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ՝

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Վ. ԶԻԼԱՎՅԱՆ

« 02 » 06 2020թ.



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵՇԽԱՑԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆԱՌՈՒԹՅԱՆ

ԲՓ 000040

Ձեռնարկողը՝

«ԵՊՀ շրջանավարդների միավորում» ՀԿ

Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1

Գործունեությունը՝ Մոնթե Մելքոնյան փողոցում բնակելի և հասարակական
շենքերով թաղամասի /«Վերածնունդ» երիտասարդական
ավանի/ կառուցապատման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայք
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈՍԿ
տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Դոնոյան



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000040

<02> 06 2020թ.

**Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան
փողոցում բնակելի և հասարակական շենքերով թաղամասի /«Վերածնունդ»
երիտասարդական ավանի/ կառուցապեման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ներածական մաս.

Ձեռնարկող՝

«ԵՊՀ շրջանավարտների միավորում» <Կ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝

ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

«ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության կողմից
նախատեսվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե
Մելքոնյան 44, 46, 46/1, 46/2, 48, 50, 52, 52/1 հասցեներում կառուցել
բազմաֆունկցիոնալ, բազմաբնակարան թաղամաս:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության
իրավունքի գրանցման վկայականներով ամրագրված՝ 6.75հա մակերեսով հողամասում,
որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝
բնակելի կառուցապատման:

Նկարագրական մաս. Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է
Ծիծեռնակաբերդի խճուղու, Մոնթե Մելքոնյան և Լենինգրադյան փողոցների
հարևանությամբ, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերձային համալիրից 500մ
հեռավորության վրա: Հարակից մյուս տարածքները կառուցապատմանց ազատ
հողամասեր են:



Կառուցապատման ենթակա տարածքն ազատ է կառուցապատումից, արևելքից արևմուտքը ունի ոելիեֆային մեծ անկում: Տարածքը քարքարոտ է, բերդի հողի հզորությունը չի գերազանցում 5-10սմ: Այս պահին իրականացվում են «Վերածնունդ» երիտասարդական ավանի կառուցապատման աշխատանքները: Առկա է շինարարական հրապարակ, մասնակի իրականացվել են հողային և բետոնային աշխատանքները:

Ուստիմնասիրվող տարածքը չի առնչվում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, բնության հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների, կամ կենսաբազմազանության տեսակների հետ:

Նախատեսվում է կառուցել իննը մասնաշենք, որոնք կազմված կլինեն կիսանկուղային և նկուղային, ինչպես նաև առավելագույնը 30 վերգետնյա հասարակական և բնակելի հարկերից:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է տվյալ միջավայրում առկա կառուցներին և չի հանդիսանում տեսադաշտի խոչընդոտ շրջակա բնակչության համար:

Կառուցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

Հողատարածքի ընդհանուր մակերես – 67.500քմ

Կառուցապատման մակերես՝

այդ թվում ասֆալտապատ ջրաթափանց մակերես – 34.258,75քմ

Կանաչապատման մակերես – 33.231,25քմ:

Բնակելի թաղամասի արտաքին ինժեներական ցանցերի համար մշակվել են վերջնական նախագծերը /ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում/: Ինժեներական ցանցերի միացումն իրականացվելու է նշված ծառայությունները մատուցող կազմակերպությունների կողմից տրամադրված տեխնիկական պայմաններին համաձայն:

Բնակարանների ջեռուցումը և տաք ջրի մատակարարումն իրականացվելու են կենտրոնական կաթսայատնից: Կաթսայատանը նախատեսված է տեղադրել երկուական Q=2500-3000կվտ դրվագքային հզորությամբ ջրաջեռուցիչ կաթսա յուրաքանչյուր մասնաշենքի հաշվարկով:

Ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն «Վեռլիա Զուր» ՓԲԸ հետ կնքված պայմանագրի: Ջրամատակարարումը իրականացվելու է Լենինգրադյան փողոցով անցնող քաղաքային ջրատարից, ջրահեռացումը՝ Լենինգրադյան փողոցով անցնող քաղաքային կոյուղատարից:

Շինարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 27 ամիս:

Շինարարության ժամանակ բնառեսուրսից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Շինարարության համար անհրաժեշտ ջրաքանակը մատակարարվելու է տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (265 մարդ) և կազմել 3.748մ³/շին.ժամ կամ 6.31մ³/օր: Ջրանի համար օգտագործվող ջուր առնանդ կազմի 583,2մ³/շին.ժամ կամ 1.8մ³/օր: Ընդհամենը ջրօգտագործումը կկազմի 4.331,25/շին.ժամ:



Երկաթբետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 336.000մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 303.000մ³ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, իսկ մնացած 33.000մ³ կօգտագործվի որպես հետլիցք:

Կառուցապատման ժամանակ բետոնը շինհրապարակ է բերվելու պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով՝ ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցներով՝ պայմանագրային հիմունքով:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինհրարական աշխատանքերի ընթացքում՝ կենցաղային աղբն՝ 67.8մ³ և շինհրարական աղբը՝ 72մ³: Շինհրարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասին հարող նախկին քարհանքի տարածքում գործող թափոնների աղբավայր:

Նոր կառուցվող բնակելի շենքերի շինհրարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինհրարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագագերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինհրարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելվու և շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված է.

– շինհրարական աշխատանքների ընթացքում, փոշենստեցման նպատակով, ջրանի իրականացում,

– ջրանի հաշվարկում այնպես, որ չառաջանա մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

– շինհրարական գործընթացում ներգրավված տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում, կարգաբերում,

– շինհրարական նյութերի և քայլութերի ժամանակավոր պահեստների տեղադրումը բետոնապատ մակերեսի վրա՝ ապահովելով հոսքերի հավաքումը,

– շինհրարական աշխատանքների իրականացում ցերեկային ժամերին,

– մեքենաների և տեխնիկայի օգտագործման ժամանակ, անհրաժեշտության դեպքում, խլացուցիչների տեղադրում,

– շինհրարական մեքենաների տեղաշարժի կազմակերպում շարասյուներով՝ 30 րոպե պարբերականությամբ և արագության սահմանափակում՝ մինչև 30կմ/ժ արագությամբ,

– փոշու տարածումը կանխարգելվու նպատակով՝ սորուն նյութերի ժամանակավոր կուտակումների և շինհրապարակի համապատասխան բարձրությամբ թաղանթով ծածկում,

– տարածքի հոսքաջրերի միավորում մեկ բակային ցանցում և միացում գոյություն ունեցող հեղեղետար ցանցին,

– շինհրապարակում թափոնների ժամանակավոր կուտակումների բացառում,

– աշխատանքների ավարտից հետո տարածքների մաքրում և առաջացած թափոնների տեղափոխում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

– կանաչապատման իրականացում համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:



Բնապահպանական միջոցառումների արժեքը գնահատվում է նախագծային աշխատանքների արժեքի մոտ 1,2%:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը կրարեկարգվի և կկանաչապատվի: Կանաչապատման նպատակով կօգտագործվի շինարարական աշխատանքներից առաջացող 760 խմ ծավալով հողի բերրի շերտը, որի հանումը, տեղափոխումը, պահեստավորումը և օգտագործումը կիրականացվի օրենքով սահմանված կարգով:

Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ: Ըստ կանաչապատման նախագծի տարածքում տնկվելու են հետևյալ ծառատեսակները՝ սոսի՝ 47հատ, սոճի՝ 36հատ, գիհի վիրգինյան՝ 35հատ, ծիակասկ՝ 56հատ, թղկի սրատերն՝ 60հատ, եղևնի՝ 35հատ, կաղնի ամառային՝ 6հատ, լացող ուտենի՝ 165հատ, գլեղիչա՝ 25հատ, հուղայածառ՝ 13հատ, ակացիա սպիտակ՝ 38հատ, փշատենի նեղտերն՝ 46հատ, դրախտածառ՝ 44հատ, կենսածառ գնդածն՝ 3հատ, կենսածառ բրգածն՝ 10հատ, ասպիրակ սպիտակ՝ 59հատ, ոսկեզանգ՝ 27հատ, բուլղեյա՝ 42հատ, գիհի կազակական՝ 59հատ, ճապոնական սերկեկի՝ 50հատ, սպիտակ հասմիկ՝ 32հատ, կծոյսուր՝ 27հատ:

Ոռոգումն իրականացվելու է նախագծի շրջանակներում կառուցվող ոռոգման ցանցի միջոցով՝ ավտոմատացված համակարգով:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, քաղաքաշինության կոմիտեն: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը պատասխանել է, որ համաձայն ներկայացված նյութերի տվյալ տարածքը չի գտնվում հուշարձանների պահպանական գոտիների համակարգում, ուստի <<ԿԳՄՍ նախարարության լիազորություններից դուրս է քննարկվող տարածքը: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, <<օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացվել են հանրային քննարկումներ գործունեության իրականացման վերաբերյալ, որը հանրության կողմից արժանացել է հավանության:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափուների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել <<գործունեությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված»:



- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պահպաներում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական իրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը և պահանջները:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա-Աերաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոցում բնակելի և հասարակական շենքերով թաղամասի /«Վերածնունդ» երիտասարդական ավանի/ կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



Հ. Ալեքսանյան